## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **21 մայիսի 2026թ.**

2026թ. մայիսի 05-ից 21-ը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ շինարարական ապրանքների ձեռքբերման թիվ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Բեգլարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների ծառայության» պետ, |
| Գ. Հայրապետյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» ծառայության հիմնանորոգման տեղամասի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Բեգլարյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ նիստին մասնակցել են երկու անդամները, բացակայում էր «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Գծի և թունելային կառույցների» ծառայության թունելային ուղեմասի պետ՝ Է. Խաչատրյանը, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մեսնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ի, անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 05-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | Մետր 10 մետրանոց | 24,000.00 | 06.05.2026 10:00 | 30,000.00 |
| 2-րդ | Գրաֆիտե քսուկ | 150,000,005.00 | 06.05.2026 10:00 | 180,000.00 |
| 3-րդ | Տախտակ եզրահան | 150,000,005.00 | 06.05.2026 10:00 | 160,000.00 |
| 4-րդ | Մետաղասղոց մեքենայական | 150,000,005.00 | 06.05.2026 10:00 | 280,000.00 |
| 5-րդ | Նրբատախտակ | 500,000.00 | 06.05.2026 10:00 | 280,000.00 |
| 6-րդ | Նիտրոներկ | 179,800.00 | 06.05.2026 10:00 | 216,000.00 |
| 7-րդ | Ներկարարի վրձին | 10,000.00 | 06.05.2026 10:30 | 12,000.00 |
| 8-րդ | Ներկարարի գլանակ | 35,000.00 | 06.05.2026 10:30 | 42,000.00 |
| 9-րդ | Միկրոֆիբրե լաթ | 17,400.00 | 06.05.2026 10:30 | 21,000.00 |
| 10-րդ | Մետաղապլաստե եվրո դուռ | 333,000.00 | 06.05.2026 10:30 | 400,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ՇԻՆ ԼԻԴԵՐ» ՍՊԸ | ք.Երևան, Արշակունյաց 204, 044577028 | shinliderllc@gmail.com | 02259512 |
| 2 | «ԿԱՄԵԴ» ՍՊԸ | ք. Վանաձոր, Խորենացի 7/1, 096765785 | vankamed@mail.ru | 06931151 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | ք. Երևան Վ. Համբարձումյան 91, 033242475 | ciacangnumner@gmail.com | 00103837 |
| 4 | «Եթերակ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան՝ Արին Բերդի 9/8, 091210605 | eterak2008@gmail.com | 00814405 |
| 5 | «ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ» Ա/Ձ | ք. Երևան, Պուշկին փ 49, բն 43, 043220123 | muradkhanyan.lernik@mail.ru | 48094744 |
| 6 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | Խուդյակով Փ./Շ/70/ 9 Ավան 0060 Երեվան Երեվան Հայաստան, 044994899 | saro_adamyan_97@mail.ru | 26027339 |
| 7 | «ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ» Ա/Ձ | Կասյան Փ., Տ 17, 096370127 | gnumner2024@mail.ru | 47889417 |
| 8 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ք. Երևան, Ավան 3-րդ փողոց, 37 տուն, 077081188 | karlen4321@mail.eu | 01032965 |
| 9 | «ՄԻԴԱՑ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արզումանյան Փ ./Շ/32/2 ԲՆ, 094772201 | midac2025@mail.ru | 01344924 |
| 10 | «ԿԱՐԵՆ ԵՎՐՈ» ՍՊԸ | Արարատ, Տափերական, Այվազովսկու Փ., Տ 11, 077476010 | gnumner2024@mail.ru | 04236997 |

2026թ. մայիսի 06-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 06-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները:

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | ՇԻՆ ԼԻԴԵՐ ՍՊԸ | 30000 | 25000 | 20% | 30000 | 12500 | 20% | 15000 | X |
| 1 | 2 | ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | 30000 | 29000 | 0% | 29000 | 13000 | 0% | 13000 | |
| 1 | 3 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 30000 | 25000 | 20% | 30000 | 16800 | 20% | 20160 | |
| 1 | 4 | Սարիբեկ Ադամյան Ա/Ձ | 30000 | 24000 | 20% | 28800 | 18000 | 20% | 21600 | |
| 1 | 5 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 30000 | 150000005 | 20% | 180000006 | 150000005 | 20% | 180000006 | **Մերժված** |
| 2 | 1 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 180000 | 150000005 | 20% | 180000006 | 150000005 | 20% | 180000006 | **Մերժված** |
| 3 | 1 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 160000 | 150000005 | 20% | 180000006 | 150000005 | 20% | 180000006 | **Մերժված** |
| 4 | 1 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 280000 | 150000005 | 20% | 180000006 | 150000005 | 20% | 180000006 | **Մերժված** |
| 5 | 1 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 280000 | 150000005 | 20% | 180000006 | 495000 | 20% | 594000 | **Մերժված** |
| 5 | 2 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 280000 | 500000 | 20% | 600000 | 500000 | 20% | 600000 | **Մերժված** |
| 6 | 1 | ԿԱՄԷԴ ՍՊԸ | 216000 | 180000 | 20% | 216000 | 120000 | 20% | 144000 | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 2 | ՄԻԴԱՑ ՍՊԸ | 216000 | 179800 | 20% | 215760 | 133000 | 20% | 159600 | |
| 6 | 3 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 216000 | 150000005 | 20% | 180000006 | 150000005 | 20% | 180000006 | **Մերժված** |
| 7 | 1 | ՇԻՆ ԼԻԴԵՐ ՍՊԸ | 12000 | 10000 | 20% | 12000 | 6000 | 20% | 7200 | X |
| 7 | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 12000 | 10000 | 20% | 12000 | 8900 | 20% | 10680 | |
| 7 | 3 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 12000 | 150000005 | 20% | 180000006 | 150000005 | 20% | 180000006 | **Մերժված** |
| 8 | 1 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 42000 | 35000 | 20% | 42000 | 19900 | 20% | 23880 | X |
| 8 | 2 | ՇԻՆ ԼԻԴԵՐ ՍՊԸ | 42000 | 35000 | 20% | 42000 | 22000 | 20% | 26400 | |
| 8 | 3 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 42000 | 150000005 | 20% | 180000006 | 150000005 | 20% | 180000006 | **Մերժված** |
| 9 | 1 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 21000 | 17500 | 20% | 21000 | 14000 | 20% | 16800 | X |
| 9 | 2 | ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | 21000 | 20900 | 0% | 20900 | 15826 | 0% | 15826 | |
| 9 | 3 | ՄԻԴԱՑ ՍՊԸ | 21000 | 17400 | 20% | 20880 | 17400 | 20% | 20880 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 4 | ՇԻՆ ԼԻԴԵՐ ՍՊԸ | 21000 | 17500 | 20% | 21000 | 17500 | 20% | 21000 | |
| 9 | 5 | ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ | 21000 | 1500000005 | 20% | 1800000006 | 1500000005 | 20% | 1800000006 | **Մերժված** |
| 10 | 1 | Եթերակ ՍՊԸ | 400000 | 333000 | 20% | 399600 | 312000 | 20% | 374400 | X |
| 10 | 2 | «ԿԱՐԵՆ ԵՎՐՈ» ՍՊԸ | 400000 | 200000000 | 20% | 240000000 | 315650 | 20% | 378780 | |

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

2026թ. մայիսի 21-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. 2-5-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:
3. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին, 7-րդ | «ՇԻՆ ԼԻԴԵՐ» ՍՊԸ | բավարար |
| 6-րդ | «ԿԱՄԵԴ» ՍՊԸ | բավարար |
| 8-9-րդ | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | բավարար |
| 10-րդ | «Եթերակ» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. մայիսի 21-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին ճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

2026թ. մայիսի 21-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման և չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ 2026թ. ապրիլի 29-ին ներկայացվել է հարցում և տրվել պարզաբանում 2026թ. ապրիլի 30-ին, իսկ հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և

պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Բեգլարյան _______________

*Հանձնաժողովի անդամ՝*

Գ. Հայրապետյան _______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյանը _______________